ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) 47.3 հոդվածում (այսուհետ՝ Հոդված) կատարել հետևյալ լրացումները.

1) Հոդվածի 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ և 10-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.
«Դեղատոմսով բաց թողնվող դեղերի բաց թողնման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:
«Դեղատոմսերի դուրս գրման կարգը խախտելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:
2) Հոդվածի 8-րդ մասում «2-6-րդ» թվերից հետո լրացնել «, 9-րդ և 10-րդ թվերը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: